

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 40/4

21 օգոստոսի 2013 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սարգիս Արդմուղճյանի 05.08.2013 թ-ի դիմում-գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշման դեմ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2013 թ-ի մայիս ամսվա ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների վերաբերյալ տեղեկությունները հարկային տեսչություն ուշ ներկայացվելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշմամբ Ա/Ձ Սարգիս Արմուղճյանի նկատմամբ կիրառվել է <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2-րդ մասով սահմանված պատասխանատվության միջոցը՝ գումարով 20.000 դրամ:

Ա/Ձ Սարգիս Արմուղճյանի գանգատում մասնավորապես նշված է.

2013 թ-ի մայիս ամսվա ՀԴՄ-ով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարների վերաբերյալ տեղեկությունը ներկայացնելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշմամբ ենթարկվել եմ վարչական տույժի:

Ա/Ձ Սարգիս Արմուղճյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշումը, քանի որ հիշատակված տեղեկությունն իր կողմից ներկայացվել է 2013 թ-ի հունիսիս 7-ին:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Սարգիս Արմուղճյանը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Սարգիս Արմուղճյանի և ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ ներկայացուցիչների բերած փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ գանգատը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Սույն գործի քննարկման ընթացքում պարզվեց, որ վարչական վարույթի իրականացման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի պահանջները: Մասնավորապես, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության, ինչպես նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշման կազմման ընթացքում խախտվել են <Վարչական իրավախախտումների վերաբերյալ> ՀՀ օրենսգրքի 255-րդ, 279-րդ և 281-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 29.07.2013 թ-ի թիվ 231566 որոշումը իսկ գործը կարճել:

Հանձնաժողովի նախագահ



S.ԲԱՐՍԵԴՅԱՆ